# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՊԵԿ աշխատակիցների ք. Աստանա (Ղազախստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

**1. Անունը, ազգանունը՝**

Ռաֆայել Գրիգորյան, Ռուզաննա Կուսիկյան

**2. Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետի տեղակալ, ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ռիսկերի վերլուծության և կառավարման բաժնի պետ

**3. Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Աստանա, Ղազախստանի Հանրապետություն, 2023թ. մարտի 1-ից 3-ը

**4. Հրավիրող կողմը՝**

Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտե

**5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝**

Մասնակցություն ԵԱՏՄ անդամ պետությունների Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային (ՄԾՄԿ) կից ռիսկերի կառավարման համակարգի զարգացման հարցերով աշխատանքային խմբի հերթական նիստին:

**6. Քննարկված թեմաները՝**

Նիստի օրակարգի համաձայն քննարկվել են ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային մարմիններում ռիսկերի կառավարման համակարգի զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը վերաբերող հարցեր, այդ թվում՝ ապրանքների ցանկում, որոնց նկատմամբ իրականացվում է մաքսային արժեքի հսկողություն, ներառված որոշ ապրանքային դիրքերի վերանայում, ռիսկի արժեքային ցուցիչների սահմանում, ԵԱՏՄ անդամ պետությունների ՄԾՄԿ որոշումների նախագծեր և այլն:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Նիստի շրջանակներում հայկական կողմը մասնակցեց նիստի օրակարգի հարցերի քննարկմանը և ներկայացրեց ՀՀ ՊԵԿ դիրքորոշումը դրանց վերաբերյալ:

Մասնավորապես՝ նիստի շրջանակներում հայկական կողմը ներկայացրեց նախորդ նիստի արձանագրության համաձայն մշակված՝ ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային մարմիններում կիրառվող ռիսկերի նվազեցման միջոցառումների համակարգված ցանկը և համապատասխան ՄԵՄԿ որոշման նախագիծը, որոնք մշակվել են ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության կողմից: Հաշվի առնելով պատրաստված փաստաթղթի մեծ ծավալը՝ կողմերը մինչև աշխատանքային խմբի հաջորդ նիստը կուսումնասիրեն ցանկը և առկայության դեպքում կներկայացնեն առաջարկություններ: Հայկական կողմը նաև ներկայացրեց դիրքորոշումներ ներկայացված այլ որոշումների նախագծերի վերաբերյալ և մասնակցեց դրանց լրամշակմանը:

Ոչ սակագնային կարգավորման ապահովման վերաբերյալ հարցի շրջանակներում հայկական կողմը ներկայացրեց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի փորձը՝ նշելով, որ նշված պահանջներն ապահովվում են ձևաչափա-տրամաբանական հսկողության շրջանակներում, ինչն արձանագրվեց արձանագրությունում: Այլ հարցի շրջանակներում հայկական կողմն արտահայտեց բացասական դիրքորոշում արժեքային հսկողության ենթակա ապրանքների ցանկում հստակ չափանիշներին չբավարարող, սակայն այլ ցանկերում ներառված ապրանքների ներառման հնարավորության սահմանման առաջարկի վերաբերյալ, մյուս կողմերը նույնպես ընդունեցին հայկական կողմի դիրքորոշումը, և նշված առաջարկը չընդունվեց:

Այնուհետև համապատասխան քննարկումների շրջանակներում հայկական կողմը առաջարկեց ապրանքների ցանկից, որոնց նկատմամբ իրականացվում է մաքսային արժեքի հսկողություն բացառել որոշակի ապրանք, և նշված առաջարկը որոշվեց քննարկել հաջորդ նիստի շրջանակներում համապատասխան վերլուծություններից հետո: Հայկական կողմը նաև ներկայացրեց ՀՀ ՊԵԿ առաջարկները համապատասխան ցանկում ներառված ապրանքների համար սահմանվող ռիսկի արժեքային ցուցիչների մակարդակների վերաբերյալ և մասնակցեց ռիսկի արժեքային ցուցիչների սահամանմանը:

Նիստի շրջանակներում քննարկված տեղեկատվությունը հանդիսանում է «ծառայողական օգտագործման համար» տեղեկատվություն և հրապարակման ենթակա չէ:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Մաքսային միության միավորված կոլեգիային կից ռիսկերի կառավարման համակարգի զարգացման աշխատանքային խմբի նիստի արդյունքների վերաբերյալ

կազմվեց համապատասխան արձանագրություն և որոշվեց շարունակել ռիսկերի կառավարման համակարգի զարգացման աշխատանքային խմբի աշխատանքները ԵԱՏՄ անդամ պետությունների ռիսկերի կառավարման գործընթացների զարգացման ուղղությամբ: Նիստի արդյունքում վերջնականապես համաձայնեցվեց ՄԾՄԿ թվով 5 որոշման նախագիծ: Համապատասխան որոշումների նախագծերը կներկայացվեն ՄԾՄԿ քարտուղարություն՝ հետագա ընթացքն ապահովելու և ս.թ. մարտի 31-ին Հայաստանի Հանրապետությունում կայանալիք ՄԾՄԿ նիստի շրջանակներում ստորագրման ներկայացնելու նպատակով: Աշխատանքային խմբի հաջորդ նիստը, համաձայն հերթականության, նախատեսվում է անց կացնել Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի 2-րդ եռամսյակում:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Արձանագրությամբ ամրագրված դրույթները կիրականացվեն դրանց համար սահմանված ժամկետներում՝ մինչև Մաքսային միության միավորված կոլեգիային կից ռիսկերի կառավարման զարգացման աշխատանքային խմբի հաջորդ նիստը, որը նախատեսված է անցկացնել 2023 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում:

**10. Ստորագրություններ՝**

Ռաֆայել Գրիգորյան

Ռուզաննա Կուսիկյան

**Ամսաթիվ՝** 07.03.2022թ.